

Թիւ 26474
Օգոստոս 14, 1979

Հոգեշնորհ
Տ. Վազգէն Ծ. Վրդ. Քէշիշեան
Առաջնորդի Փոխանորդ Գանատայի
Թորոնթօ.

Սիրելի Հայր Վազգէն,

Թեմական Խորհուրդի Օգոստոս 10, 1979 նիստին մէջ անդրադարձանք մեր եւ Թեմական Խորհուրդի ամբողջ կազմին ունեցած առաջին պաշտօնական հանդիպումին՝ ձեր եւ Թորոնթօ ընկող մեր զաւակներէն տասներեք ազգայիններու հետ, 1979 Յուլիս 14, Շաբաթ օր, Թորոնթոյի Ս. Երրորդութիւն Հայց. Եկեղեցւոյ մէջ:

Այս հանդիպումին զլիաւոր նպատակն էր օրինաւոր միջոցներով հաստատել երկրորդ համայնք մը Թորոնթոյի մէջ:

Մեր եւ Թեմական Խորհուրդի գոհունակութիւնը կը յայտնենք որ հրաւիրուած տասներեք ազգայինները պաշտօնապէս յայտարարեցին որ իրենք որոշած են հնազանդիլ Առաջնորդին եւ Թեմական Իշխանութեան եւ պատրաստակամ են իրենց տրուելիք հրահանգներուն համաձայն կազմակերպել Թորոնթոյի մէջ մեր երկրորդ համայնքը Ս. Խաչ Հայց. Եկեղեցի անունով:

Վստահ ենք թէ ուղիղ եւ բարի մտադրութեամբ առաջադրուած այս նպատակը պիտի իրագործուի հարթելով անցեալի տարակարծութիւնները, եւ զործածելով մեր զաւակներուն հոգեւոր եւ իմացական տաղանդը եւ կարողութիւնները՝ մեր հոգեւոր մօր՝ Հայց. Սուրբ Եկեղեցիի հովանիին ներքեւ խմբելով զանոնք եւ բարգաւաճեցնելով անոնց կրօնական, մշակութային, ազգային, կրթական եւ ընկերային կեանքը:

Յուլիս 14ին տեղի ունեցած խորհրդակցութեանց հիման վրայ եւ յստակ ընելու համար կատարուելիք աշխատանքներու ուղեգիծը եւ պատասխանատուութիւնները, ձեզի կը հրահանգենք պատշաճը տնօրինել հետեւելով ձեզի տրուած ցուցմունքներուն:

1. Թեմական Խորհուրդը նկատի ունեցաւ Թորոնթոյի մէջ կազմուելիք երկրորդ ծուխի մը կազմակերպման համար իր նշանակած յանձնախումբը եւ նաեւ նկատի առաւ ստացուած տեղեկութիւնը թէ երկրորդ ծուխէն հաւանական ծխականներ ժողով գումարելով որոշ անձեր ընտրած են իբրեւ ծխական Խորհուրդ: Վերոյիշեալ տուեալները նկատի ունենալով, ներկայ գիրով կը լուծենք որեւէ եւ բոլոր մարմինները եւ յանձնախումբերը՝ որոնք նախապէս նշանակուած կամ ընտրուած են գործելու երկրորդ ծուխի անունով, եւ հետեւեալ անձերը կը նշանակենք Առժամեայ Ծխական Խորհուրդ Թորոնթոյի մէջ կազմուելիք երկրորդ ծուխին Սուրբ Խաչ Հայց. Եկեղեցի անունով.

- Տոբթ. Վարդան Այնաճեան
- Տիար Անդրանիկ Ջաքարեան
- Տիար Սուրէն Էվրան
- Տիար Եղիա Թորոսեան
- Տիար Մարտիկ Հէքիմեան
- Տիար Յակոբ Նար
- Տիար Ղեւոնդ Շահմելիքեան
- Տիար Լեւոն Զեօմլէքեան
- Տոբթ. Վահէ Սվաճեան
- Տոբթ. Վաչէ Քերամեթլեան
- Տիար Յակոբ Քէլէշեան
- Տիար Մամէն Քիւրքմեան
- Տիար Ժան Ֆէնէրմեան

2. Կը հրահանգենք ձեզի որ վերոյիշեալ անձերը հրաւիրէք ժողովի՝ ուր զաղանի բուլետարկութեամբ եւ ներկաներու մեծամասնութեան բուլետով պէտք է ընտրեն Ատենապետ եւ Փոխ Ատենապետ, Ատենաղպիր եւ Փոխ Ատենաղպիր, Գանձապահ եւ Փոխ Գանձապահ, եւ եթէ անհրաժեշտ է այլ պաշտօններու համար պատասխանատուներ՝ եւ անոնց անունները մեզի ներկայացնէք վաւերացման համար: Համեցէք նաեւ ղրկել իւրաքանչիւրին հասցէն եւ հեռաձայնի թիւը:

3. Նշանակուած վերոյիշեալ անձերը պիտի ծառայեն հրահանգներուն համաձայն Առաջնորդին եւ Թեմական Խորհուրդին: Եւ Առժամեայ Ծխական Խորհուրդի ոեւէ մէկ անդամ որ կ'անսաստէ կամ հակառակ կը գործէ սրուած հրահանգներուն՝ ենթակայ կ'ըլլայ պաշտօնէ հեռացուելու Առաջնորդի եւ Թեմական Խորհուրդի պաշտօնազրով եւ կ'արգիլուի որեւէ հանգամանքով Սուրբ Խաչ Եկեղեցիի անունով գործելու:

4. Առժամեայ Ծխական Խորհուրդը պարտի հետապնդել եւ կատարել հետեւեալը.
ա. նկատի ունենալով Թորոնթոյի մէջ Ս. Երրորդութիւն Հայց. Եկեղեցւոյ ծուխին ներկայութիւնը եւ անդամութիւնը, Ս. Խաչ Եկեղեցւոյ անդամ անձանազրուող ամէն անհատ պարտի ստորագրել տրատու անդամութեան համար պատրաստուած հաստատագիրը: --Տես օրինակը--
բ. իւրաքանչիւր տրատու անդամ պարտի վճարել իր տարետուրբը, որ նուազագոյն 15 տուար է:

զ. Կարգադրութիւններ ընել առաջին Տարեկան Անդամական Ժողովը գումարելու 1980 Փետրուար ամսու մէջ՝ նախագահութեամբ Գանատայի մէջ Առաջնորդի Փոխանորդին:

դ. 1980 Փետրուարին գումարուելիք առաջին Տարեկան Անդամական Ժողովին մասնակցելու եւ ըուէարկելու, եւ ծուխին մէջ որեւէ պաշտօնի ընտրուելու համար, իւրաքանչիւր անհատ պարտի իրաւասու անդամ դառնալ 1979 Նոյեմբեր 15էն առաջ՝ ամբողջացնելով ա. եւ բ. հատուածներուն մէջ յիշուած պայմանները:

--Հանձնեցէք նկատի ունենալ որ միայն այս առաջին անգամուս⁴ համար եւ այս նպատակով զանց կ'առնենք մեր Թեմական Կանոնադրութեան յօդուած 7ի մէջ յիշուած պայմանները: Առաջին Անդամական Ժողովէն յետոյ, Կանոնադրութեան ցուցմունքներուն կը հետեւիր:--

ե. Ոչ մէկ պարագայի Առժամեայ Ժիական Խորհուրդը կրնայ որեւէ պարտաւորութեան տակ դնել ծուխը կամ Առաջնորդարանը որեւէ նպատակով կամ պատճառով կալուածական գնում կատարելով կամ շէնքի գործածութեան անունով վարձքի եւ կամ այլ ծախքի ենթարկելով, առանց կանխաւ արտօնութիւնը ստանալու Առաջնորդին եւ Թեմական Խորհուրդին:

զ. Ցնոր տնօրինութիւն, Հայց. Եկեղեցւոյ Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան Թեմի Առաջնորդի Փոխանորդը Գանատայի մէջ այս համայնքին կրօնական եւ եկեղեցական գործերուն անմիջական պատասխանատուն պիտի ըլլայ:

է. Սուրբ Խաչ համայնքի տնտեսական եւ վարչական գործառնութիւնները պիտի կատարուին նախագահութեամբ Առաջնորդի Փոխանորդին եւ ծուխին ըզլոր ձեռնարկները պէտք է ծրագրուին համաձայն Հայց. Եկեղեցւոյ Հիւսիսային Ամերիկայի Թեմական Կանոնադրութեան:

5. Գիտակ ըլլալով որ Հայց. Եկեղեցւոյ Հիւսիսային Ամերիկայի Թեմը իբրեւ իրաւական անձնաւորեալ կազմակերպութիւն արձանագրուած է Միացեալ Նահանգաց Նիւ Եորք Նահանգի մէջ՝ որեւէ օրինական վաւերագիր ստորագրելու կամ կանոնական բարեփոխումներ կատարելու համար Սուրբ Խաչ համայնքի ոեւէ եւ ըզլոր ներկայացուցիչները ենթակայ են Առաջնորդին եւ Թեմական Խորհուրդի հրահանգներուն; յարգելով Գանատական օրէնքներու տրամադրութիւնը:

6. Առժամեայ Ժիական Խորհուրդի մէջ ծառայելու համար նշանակուած ոեւէ մէկ անդամի տեղ, որ անկարող է իր պարտականութիւնները կատարել մահուան, հրաժարման կամ առանց պատճառի չորս յաջորդական ժողովներէն բացակայելու կամ այլ պատճառաւ, Առաջնորդը եւ Թեմական Խորհուրդը նոր անդամ մը կը նշանակեն:

7. Բոլոր թղթակցութեանց եւ արձանագրութեանց օրինակներէն պէտք է պահուին նաեւ Առաջնորդի Փոխանորդին մօտ:

8. Ս. Խաչ Հայց. Եկեղեցւոյ անունով պետութեան մօտ արձանագրուած կանոններու մէջ կատարուելիք անհրաժեշտ փոփոխութիւնները յառաջիկային պիտի ներկայացնենք, համաձայնեցնելու համար զանոնք Հայց. Եկեղեցւոյ Հիւսիսային Ամերիկայի Թեմի Կանոնադրութեան արամադրութեանց հետ:
9. Թեմական Խորհուրդի Օգոստոս 10 նիստին մէջ ակնարկութիւն եղաւ Յունիս 27, 1979 թուակիր գրութեան մը որ Յունիս 14ին մեր հանդիպումէն յետոյ ղրկուած է զանազան անձերու եւ որուն ներքեւ ղրուած տասներեք անուններէն վեցը ներկայիս մեր հաստատելիք Առժամեայ Ժխական Խորհուրդի անդամներու ստորագրութիւնն են: Թեմական Խորհուրդի նիստին մէջ որոշեցինք աննկատ թողուլ այս անխորհուրդ արարքը, վստահելով Յունիս 14ի ժողովին մէջ նոյն անձերու ցուցաբերած ուղղամիտ կեցուածքին եւ յայտարարութեան:

Մեր թելադրութիւնն է որ զիրար քաջալերէք ``ի գործս բարիս``, որպէս զի սատանան որ ակնդէտ պատրաստ է իրենց հաւատքին մէջ հաստատ մնացողները խորթալելու՝ ամօթալից հեռանայ ձեր մէջէն: Կը մաղթենք որ Աստուծոյ օրհնութիւնը անպակաս մնայ ձեր եւ Ս. Խաչ Հայց. Եկեղեցւոյ Առժամեայ Ժխական Խորհուրդի եւ մեր Եկեղեցւոյ բոլոր զաւակներուն վրայէն:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

ՍՈՒՐԲ ԽԱՉ
ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ
ԵԿԵՂԵՑԻ

Holy Cross
Armenian Church

10 Յուլիս 1979

Հոգեշնորհ

Տէր Վազգէն Ժ. Արդ. Քէշիշեան

Առաջնորդական Փոխանորդ

Գանատայի Հայոց

Թորոնթօ.

Յարգելի Հայր Սուրբ,

Ս. Խաչ Հայաստանեայց Եկեղեցւոյ առաջին անդամական ժողովը տեղի ունեցաւ 7 Յուլիս 1979 Շաբաթ երեկոյ, ի ներկայութեան 136 ղովարկու անդամներու:

Տեղեկատուութիւններէ եւ հաշուետուութիւններէ վերջ, ծխական խորհուրդի, Ընտրողական եւ հաշուեքննիչ Յանձնախումբերու ղնտրութիւնները եղան:

Հետեւեալ որոշումները անուեցան.

ա- Ընտրողական Յանձնախումբը յաջորդ տարեկան անդամական ժողովին ներկայացնելու համար, ծխական խորհուրդի, Պատգամաւորներու, Ընտրողական եւ հաշուեքննիչ Յանձնախումբերու թեկնածուներու երկպատիկ ցանկը մինչեւ 15 Դեկտեմբեր կը պատրաստէ: Այդ թուականէն սկսեալ, ներառեալ ղնտրութեան օրը, ոչ ոքի թեկնածութիւնը կ'ընդունուի:

բ- Անդամ մը, նուազագոյն 15 տօլար նուիրատուութեամբ քուէարկութեան իրաւոցնը կը ստանայ:

գ- Ծուխիս հիմնադիր անդամներէն Տիար Գ. Մազմանեան, տարիքի բերմամբ, հրաժարականը ներկայացուցած ըլլալով, ծխական խորհուրդի թիւը 13 ըլլալով կը սահմանափակուի:

Ծխական խորհուրդս 9 Յուլիսի հերթական նիստին կազմեց իր ղիւանը: Ստորեւ կը ներկայացնենք Ընտրողական եւ հաշուեքննիչ Յանձնախումբերու անուանացանկը եւ ծխական խորհուրդի վերջին կազմը:

Հաշուեքննիչ Յանձնախումբ .

Տիկին Շաքէ Շահնազարեան, Տիար Յարութիւն Սահակեան եւ Տիար Ժիրայր Սվամեան

Բնտրողական Յանձնախումբ .

Տօրթ. Նորայր Ճէյլանլը, Տօրթ. Մանուէլ Սաքարիա, Տիարք Վահէ Պետրոս-

եան, Յովակիմ Օլթանեան եւ Վահէ Բերամեթլեան

Ծխական Խորհուրդ .

Տօրթ.	Վարդան	1) Այնաճեան	Ատենապետ
Տիար	Արմէն	2) Քիւրքճեան	Փոխ Ատենապետ
Տիար	Յակոբ	3) Նար	Ատենադպիր
Տօրթ.	Վահէ	4) Սվաճեան	Փոխ Ատենադպիր
Տիար	Ղեւոնդ	5) Շահմելիքեան	Գանձապահ
Տիար	Անդրանիկ	6) Զազարեան	Փոխ Գանձապահ
Տիար	Սողոմէն	7) Էվրան	Խորհրդական
Տիար	Եղիա	8) Թորոսեան	"
Տիար	Մարտիկ	9) Հէքիմեան	"
Տիար	Լեւոն	10) Չէօմլէքճեան	"
Տօրթ.	Վաչէ	11) Բերամեթլեան	"
Տիար	Յակոբ	12) Քէլէշեան	"
Տիար	Ժան	13) Փէնէրճեան	"

Ի Դիմաց

Ս. Խաչ Հայր. Եկեղեցւոյ

Ծխական Խորհուրդի

Մօթթ. Ա. Վ. Այնաճեան

Տօրթ. Ա. Վ. Այնաճեան

Ատենապետ

ՍՈՌՐԻ ԽԱԶ ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

ԹՈՐՈՆԹՕ, ԳԱՆԱՏԱ

ԱՆԴԱՄԱԳՐՈՒԹԵԱՆ ԴԻՄՈՒՄՆԱԳԻՐ

Կը փախաքիմ արձանագրուելի որպէս տրատու եւ քուէարկող անդամ Թորոնթոյի Ս. Խաչ Հայց. Առաքելական Եկեղեցւոյ համայնքին, որ կը գտնուի Հիւսիսային Ամերիկայի Հայց. Եկեղեցւոյ Արեւելեան Թեմի հոգեւոր իշխանութեան ներքեւ:

- Տրատու եւ քուէարկող անդամ չեմ ուրիշ որեւէ եկեղեցւոյ:
- Մկրտուած եմ Հայց. Առաքելական Եկեղեցւոյ մէջ, հաղորդակից անդամ եմ անոր:
- Կը խոստանամ յարգել Թեմին Կանոնադրութիւնը:
- Տասնըութը տարեկանէն վեր եմ:

Անուն - ՄԱԿԱՆՈՒՆ

ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ՎԱՅՐ. ա. Եկեղեցւոյ անուն

բ. Քաղաքի անուն

գ. Մկրտող Քահանայի անուն

ՀԱՍՑԷ ՔԱՂԱՔ

ՀԵՌԱԶԱՅՆ ՓՈՍՏԸԼ ԳՕՏ

ԹՈՒԱԿԱՆ ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ

- Հայց. Եկեղեցւոյ Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան Թեմի մէջ համայնքի մը քուէարկող անդամ ըլլալու համար՝ ոեւէ մէկը պէտք է մկրտուած ըլլայ Հայց. Առաքելական Եկեղեցւոյ մէջ, կամ հաղորդակից անդամ՝ անոր, նուազագոյն 18 տարեկան, վճարած՝ տարեկան անդամատուրքը եւ անդամ՝ ոչ աւելի քան մէկ համայնքի:

ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆ ՀՈՎԻՒՒ. -

.....

.....

ԸՆԴՈՒՆՄԱՆ ԹՈՒԱԿԱՆ ԱՆԴԱՄԱՏՈՒՐ

՝ Հաղորդակից անդամ՝. - Հայց. Եկեղեցւոյ իւրաքանչիւր անդամ պէտք է մկրտուած ըլլայ: Ոչ-հայ քրիստոնեայ եկեղեցիներու մէջ վկայարժան մկրտութիւնը ընդունելի է. այս պարագային Հայ Եկեղեցականք մը կրնայ Գրոշմի Խորհուրդը կատարել եւ ընդունիլ զինք որպէս Հայց. Եկեղեցւոյ Հաղորդակից Անդամ: Ուրեմն հաղորդակից, այս պարագայի, կը նշանակէ մկրտութիւն այս Եկեղեցւոյ մէջ՝ որ օրինաւոր կը դառնայ Գրոշմի Խորհուրդով եւ ընդունմամբ Հայց. Եկեղեցւոյ կողմէ: